ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՕԳՈՍՏՈՍԻ 2022թվականի N 750-Ա

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2022Թ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով, Արմավիր համայնքի ավագանու 11.02.2022թ. թիվ 058-Ն որոշման 8-րդ կետով, հիմք ընդունելով աշխատակազմի առաջատար մասնագետ Թ. Շառոյանի 10.08.2022թ. թիվ 4280 զեկուցագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 01 բաժնի 1 խմբի 1 դասի «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» ծրագրի համայնքապետարանի ծախսերի «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» 4112 հոդվածի պլանը պակասեցնել 1000.0 հազար դրամով և ավելացնել «Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր» 4222 հոդվածի պլանին, Լիտվայի հանրապետության Վիսագինասի քաղաքապետ Է. Գալագուզի հրավերով համայնքի աշխատակիցների մեկնումը Վիսագինաս կազմակերպելու համար:

2. Արմավիր համայնքի 2022թ.բյուջեի և ծախսերի նախահաշվում կատարել համապատասխան փոփո;ություններ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2022 թ. օգոստոսի 15
ք. Արմավիր